ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 07 31.01.2014թ.

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918 որոշման պահանջներով և հիմք ընդունելով հողերի օգտագործման միջգերատեսչական հանձնաժողովի 31.01.2014թ. թիվ 7 եզրակացությունը.՝ Սուրենավան համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել Սուրենավան համայնքի հողերի օգտագործման ժամանակվոր սխեման ըստ որի պետական սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողամասերից 2,332հա փոխադրել բնակավայրերի հողամասերի կատեգորիայի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Աղամյան
Ա. Շահվերդյան
Կ. Մարտիրոսյան
Ա.Աբրահամյան
Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Գ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 08 31.01.2014թ.

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով << Միկա-Քորփորեյշն>> ՓԲԸ-ի դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով՝ Սուրենավան համայնքի ավագանին **որոշում է.**

Թույլատրել համայնքի ղեկավարի << Միկա-Քորփորեյշն>> ՓԲԸ-ի կողմից վարձակալած 1.8 հահողամասից 0.6հա համաձայն հատակագծի՝ ուղղակի վաճառքով 1քմ 342/երեք հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ օտարել << Միկա-Քորփորեյշն>> ՓԲԸ-ին:

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Աղամյան
Ա.Աբրահամյան
Ա. Շահվերդյան
Կ. Մարտիրոսյան
Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Վ. Կարապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 09 — 31.01.2014թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.11.2013Թ. ԹԻՎ 06 ՆԻՍՏԻ 03ՈՐՈՇՈՒՄԸ ԾԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝ Սուրենավան համայնքի ավագանին **որոշում է.**

Ճեղյալ համարել ավագանու 2013 թվականի նոյեմբերի 04-ի Սուրենավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանի պատշգամբը նվիրելու մասին թիվ 03 որոշումը:

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Աղամյան

Ա.Աբրահամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան

Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Ա. Կարապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 10 31.01.2014թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ Սուրենավան համայնքի ավագանին **որոշում է.**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ վաճառքի կարգով օտարելու:

Վերլու Ներքին Արփայի գոտուց.

Լոտ1 03-086- 0047-0002 1.2 հա ջրովի վարելահող 5-րդ կարգ

Լոտ2 03-086-0239-ից 9.97760 հա վարելահող 5-րդ կարգ

Լոտ3 03-086-0239-ից 4,0 հա վարելահող 5-րդ կարգ

Ընդամենը – 15.1776 հա:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 30-ի թիվ 1572-Ն որոշումը համայնքի ղեկավարը առաջարկեց գյուղատնտեսական գործունեություն ծավալելով նպատակով օտարվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա,իսկ առավելագույնը սահմանել 20,0 հա, ինչպես նաև առանձին հողամասերի համար հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում ընդունված չափերը:

2. Օտարվող հողամասի աճուրդ- վաճառքի մեկնարկային գինը սահմանել հողամասերի կադաստրային արժեքի 100%-ի չափով:

3.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելով նպատակով օտարվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա,իսկ առավելագույնը սահմանել 20,0 հա, ինչպես նաև առանձին հողամասերի համար հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում ընդունված չափերը:

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Աղամյան Ա.Աբրահամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Վ. Առաքելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 11 31.01.2014թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ Սուրենավան համայնքի ավագանին **որոշում է.**

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողերը առանձնացնելու և մրցույթի կարգով վարձակալությամբ տալու:

Վերու Ներքին Արփայի զոտուց.

Լոտ1 ծածկագիր 03-086- 0254-0052 0,09465 հա վարելահող 5-րդ կարգ

Լոտ2 ծածկագիր 03-086- 0254-0020-0004 0,60535 հա վարելահող 5-րդ կարգ

Ընդամենը – 0,7 հա:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 30-ի թիվ 1572-Ն որոշումը համայնքի ղեկավարը առաջարկեց գյուղատնտեսական գործունեություն ծավալելով նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա,իսկ առավելագույնը սահմանել 20,0 հա, ինչպես նաև առանձին հողամասերի համար հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում ընդունված չափերը:

ա/Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի մեկնարկային վարձավճարը սահմանել հողամասի զուտ եկամտի 22 % :

բ/Գյուղատնտեսական գործունեություն ծավալելով նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա,իսկ առավելագույնը սահմանել 20,0 հա, ինչպես նաև առանձին հողամասերի համար հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում ընդունված չափերը:

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Աղամյան Ա.Աբրահամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Ս. Կարապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 12 31.01.2014թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ Սուրենավան համայնքի ավագանին **որոշում է.**

Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդ վաճառքի կարգով օտարելու Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող բնակավայրի հասարակական կառուցապատման հողը:

Վերու Ներքին Արփայի զոտուց.

Լոտ1 03-086- 0151-0013 0,5339 հա հասարակական կառուցապատման հող

Ընդամենը – 0,5339 հա:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 30-ի թիվ 1572-Ն որոշումը համայնքի ղեկավարը առաջարկեց գյուղատնտեսական գործունեություն ծավալելով նպատակով օտարվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա,իսկ առավելագույնը սահմանել 20,0 հա, ինչպես նաև առանձին հողամասերի համար հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում ընդունված չափերը:

ա/ Օտարվող հողամասի աճուրդ- վաճառքի մեկնարկային գինը սահմանել հողամասերի կադաստրային արժեքի 100%-ի չափով:

բ/Գյուղատնտեսական գործունեություն ծավալելով նպատակով օտարվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա,իսկ առավելագույնը սահմանել 20,0 հա, ինչպես նաև առանձին հողամասերի համար հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում ընդունված չափերը:

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Աղամյան Ա.Աբրահամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Կ. Կարապետյան